

**ՓՇՐԱՆՔՆԵՐ ՀՈԳԻԻ ԱՐՁԱԳԱՆԳԷՆ
ՄԱՍ Ա.**

- 1. ԵՐԿՆԱԻՈՐԸ**
- 2. ԲԱՑԱՐՁԱԿԸ--ԱՍՏՈՒԱԾ**
- 3. ՆԵՐՔՆԱԳՈՅՆ "ԵՍ"-Ը**
- 4. ԱՆԱՌԱԿ ՈՐԳԻՆ**
- 5. «ՍՏԵՂԾ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԶՄԱՐԴՆ
ՀՈՂ ՅԵՐԿՐԷ»**

SPIRITUAL CRUMBS FOR A SEARCHING SOUL

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2003

Մեծայարգ Տիար Ալպէր Նորատունկեան
Թորոնթօ

Միրելի Ալպէր,

Հաճոյքով ընթերցեցի "Փջրանքներ Հոգիի Արձագանգէն" հոգեւոր ապրումներով պատրաստուած գրութիւնդ, որն անկասկածօրէն կ'արտացոլացնէ հոգիիդ պատկերը:

Քեզ անձամբ ճանչցած ըլլալով առաւել եւս կ'ըմբոջիսնեմ գրութիւններդ, որովհետեւ յստակօրէն կը տեսնեմ ու կը զգամ հոգիիդ մղումը՝ կեանքը ապրելու սրբութեամբ:

"Փջրանքներ Հոգիի Արձագանգէն" գրութեան մէջէն կը բաղեմ բանի մը խորհրդածութիւններ, որոնք իրապէս կ'ոգեւորեն ինձ և աւելին՝ անոնց մէջ կը գտնեմ մտածումի ու համոզումի նոյնութիւնը իմ խորհուրդներուս հետ ներդաշնակուած: Այսպէս օրինակ, երբ կը խօսիս Աստուծոյ մասին, որպէս կատարեալին, հետեւեալը կը սահմանես. "Մարդուն մէջ կայ նիւթէն աւելի զօրեղ խոյանք մը, որ դէպի բացարձակին ու կատարեալին կ'ուղղէ անոր իղձը": Ես հաւատացած եմ, որ սա առաքինութիւն մըն է բրիստոնեայի կեաքին մէջ և եթէ մարդը կամ բրիստոնեան կը կորսնցնէ զայն, ապա կը պարպուի Աստուծոյ ներկայութենէն:

Մէկ ուրիշ տեղ երբ կը խօսիս "Ես"ի մասին, այնքան իրականօրէն կը բացատրես վնասները եսասիրութեան. "Ես"ասիրութեամբ մարդը կը մեկուսանայ ընկերութենէն և կ'անջատուի Աստուծմէ: "Եսասիրութեան դրօշին տակ մարդ արարածը փոխանակ բարձրանալու և աստուածանելու, կը թաւալի դէպի կորուստ:

Գրութիւններուդ առանցքը կարծես ըլլայ "Անառակ"ին նուիրուած գլուխը, ուր բանի մը սողի մէջ կու տաս առակին ամբողջական իմաստը. "Անառակին հօրը յայտնաբերած բազում ողորմ սերը հանդէպ իր զակին, մարդկութիւնը բայլ մը եւս մօտեցուցած է Աստուծոյ, ոչ միայն հաւատալու և հնազանդելու, այլ՝ սիրելու և վստահելու Աստուծոյ գթասիրութեան և ողորմածութեան":

Միրելի Ալպէր, հոգեւոր ջունչով լեցուն գրութիւններուդ շարքին այս գրքոյկը եւս կու գայ դառնալու ոսկէ նոր օղակ մը ցարդ հրատարակուածներու շղթային վրայ:

Երանի՜ Բեգի, որ կեանքդ հաստատած ես Աստուածաշունչ
Մատենանէն ճառագայթող լոյսին վրայ. այդ լոյսը՝ Քրիստոսն է:

Մտամք Սրտագին Բարեմաղթութիւններով,
Աղօթարար՝

Յովնան Արք. Տէրսէրեան
Առաջնորդ Գանատահայոց

ՉՕՆ

ՏԱՌԱՊԱԿՈՒ ՅՈԳԻՆԵՐՈՒ

Տառապանքի ու ցաւի ճամբան է, որ կը տանի Աստուծոյ արեւոյութիւն: Այս խորաթափանց տեսութիւնը օտար է թէ պատմական գաղափարականութեան և թէ եսապաշտ իմաստասիրութեան:

«Մարդու Որդին ալ պէտք է չարչարուի բայց ան Յարութիւն պիտի առնէ» ըսաւ Յիսուս: Ոչ միայն եղիա մարգարէն կամ Յովհաննէս Մկրտիչ պիտի չարչարուին, տառապին և անարգուին, այլ նաեւ Որդին Մարդոյ: Տառապանքի և հեծութեան ընդմէջէն մարդ կրնայ տեսնել իրականութիւնը:

Մի միայն իրիկնամութիւն (տառապանքի և ցաւի մէջ) քաղուներուն կ'երեւի լուսազարդուած և գեղեցկատեսիլ աստղակամար երկինքը: Նուիրումի և տառապանքի հնոցին (տառապանքի ծփանուտ ալիքներու) մէջ առաւելաբար, որ մաքրագտուեցաւ և վերընձիւղեցաւ առաքելներու և սուրբերու հաւատքի ոգին:

Երբեմն այնպէս կը կարծենք, թէ Աստուած անկարող է չարը կամ տառապանքը արգիլել:

1. Միայն հաւատն է, որ կրնայ ըմբռնել և թափանցել ամենակալ Աստուծոյ *ամբողջատիրական* խորհուրդ գորութեան:

2. Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Կեանքի մէջ տառապանքն ու երջանկութիւնը միախառնուած են ինչպէս որ բնութեան մէջ ցերեկն ու գիշերը:

«Նորագոյն վիշտի և յուսախաբութեան մէջ, կայ յոյս, և ահագնագոր ցաւի ու տառապանքի մէջ երբ յանկարծ, տիեզերք կործանի և ամայնայ, կ'ոյ Աստուած»:

ա. Յիսուս ճաշակեց տառապանքը, բայց չի դառնացաւ, քանի որ *նեքե՛լ* գիտէր:

բ. Յիսուս ներել սորված էր, քանի որ *սիրե՛լ* գիտէր:

Ալպէր Նորատունկեան
1997

Ե Ր Կ Ն Ա Ի Ո Ր Ը

Աստուած անճառելի Զաղցրութիւն և կեանքի Մեծ Իրակա-
նութիւնն է: Անոր հոյակապ փառքն ու պանծալի Վեհութիւնը թէեւ
ըմբռնողութեան համար յաւետ անիմանալի, սակայն զգացողու-
թեամբ հասանելի է: Երկնաւորը, Բարձրեալը և Ամենակարողը,
*«Աւելի խորապէս կարելի է երեւակայել, քան բացատրել, և ալ աւելի
իրապէս գոյ է Ան, քան թէ կրնաւե՛ք երեւակայել Ձիւնք»*:

Անստեղծ Սկիզբը՝ ո՛չ էութենէ Ստեղծողը, Աստուած է:
Կեանքի գերագոյն Իրականութիւնը՝ Անժամանցելին և Անբովան-
դակելի Մեծութիւնը տեսանելի է *հաւատքի՝* աչքերով և սրբագոր-
ծուած հասկացողութեամբ: Մարդկային բարձրագոյն և ծայրագոյն
ձգտումը՝ Աստուծոյ հետ հաղորդուիլ, միաւորուիլ և ձուլուիլ է
առանց կորսնցնելու ի՛ր անձնականութիւնը: Սոյն ձգտումն ու
մարդկային հոգեկան թռիչքը կու գայ աստուածային էատարրէն, որ
գոյ է իւրաքանչիւր մարդ անհատի հոգւոյն մէջ (աստուածակեր-
պարանքին) սակայն կը կարօտի մշակման ու կատարելագործման:

*«Արդ եղերու՛ք դու՛ք կատարեալք, որպէս և
Հայրն ձեռք երկնաւոր կատարեալ է»* --Յիսուս:

Անջրպետի գեղեցկագոյն ստեղծութիւնն ու անզուգական
հրաշակերտութիւնը մարմնաւոր կաւին մէջ կրնայ զգալ աստուա-
ծային ներգործութիւնը: Մարդ, որ բաղադրութիւնն է նիւթի և
հոգիի, մահուան և յաւերժութեան, ներանձնական ապրումներու և
զգայնութիւններու գերագոյն վայելքը, իր սրտին ու հոգիին տիրա-
պետող պոռթկումները, կու գան աստուածային որդեգրութեան և
ժառանգի իրաւունքի գիտակցութենէն: Երկրածին բանաւորը՝ իր
մէջ բան մը ունի՝ որ աւելի՛ է քան արիւնք, ոսկորը և ջիղը:

Մարդուն ներկան անստոյգ է, անցեալը անյայտ, և ապանին՝
կասկածելի: Ան կը նմանի մարդ մտնելու վրայ եղող ճառագայթի
մը, որ վերջնական աւարը պիտի դառնայ խաւար մթութեան:
Սակայն մշտնջենական և անհուն Պահապան Աստուծոյ շնորհքը,
ողորմութիւնն ու իրագործումը կը հասնի Սատանայէն առեւան-
գուած պատանդին ու Լուսեղէն Մարդեղութիւնը՝ Իր կարեկցութեան
խօսքերով, Իր Աջին հպումովը, Իր նայուածքին սեւեռումովը կ'ըսէ
տարագիր ու շնչաւոր մատենանին՝ մարդուն:

*«Ես իսկ եմ Ձարութիւն և Կեանք. որ հաւատայ
Ձիւ, թէպէտ և մեռանի, կեցցի»* --Յիսուս:

Աստուածային բնութեան վեհութիւնը անջրպետի աստղածովերու
Արարիչը ըլլալը չէ՛, արեգակնային դրութեան մէջ երկիր ու կեանք
գոյացութեան բերելը չէ, այլ մեղքի պարաններով կաշկանդուած,
մոլորաշաւիղ մտախաբ և մտքի մռայլ կուրութեամբ քալող իր մարդ
արարածները անձառ Քաղցրութեամբ սիրելը, անոխակալ և
բարեգութ սիեզերական **Սէ՛Ր** ըլլան է:

Ուստի:

Երկնաւորին, Բարձրեալին, Ամենակարողին, Հրաջֆներու
համատարած Զօրութեան և Անձառելի Սուրբ Միտոյ՝ յաւերժ փառք,
Ժնրադրութիւն ու երկրպագութիւն սուրբ համբոյրով ու մահուր
սրտով:

Յունուար 8, 1992

Թորոնթօ

ԲԱՅԱՐՁԱԿԸ - - ԱՍՏՈՒԱԾ

Բացարձակ բառը լատիներեն Absolutus կը գրուի ու կը նշանակէ անկախ, անսահմանափակ իմաստով, ինքնագոյ, անվիճելի և վերջնական, կատարեալ և անսակարկելի նշանակութեամբ:

Բացարձակ բառը իմաստասիրութեան մէջ կը պատկերէ ծայրագոյն անփոխարինելի իրողութիւնը: Վերջնագոյն իրականութիւնը, կատարեալը, անարատը և ակնադիւրը կեանքին: Պղատոնի համար "բացարձակ"ը Բարիին ըմբռնումն էր, իսկ Աբիւնոզայի համար էականին գոյացութիւնը կամ բուն Միտքը:

Բացարձակին ջատագովները, ընդհանրապէս եղած են գաղափարական խորհրդածողներ, որոնք կը հաւատան թէ գերագոյն իրականութիւնը Միտքն է, Մտածողութիւնը և Տրամաբանութիւնը: Լթոյ Դարու "լուսաւոր" նիւթապաշտ ակադեմականներ, իրենց յաւակնոտ իմաստութեամբ, վճռեցին թէ **ԲԱՅԱՐՁԱԿ** իրականութիւն գոյութիւն չունի, և ամէն ինչ *յարաբերական* է: Ըստ անաստուած գաղափարաբանութեան՝ բարին ու չարը *յարաբերական* են ու ոչ բացարձակ:

Մեծ ուրացողը, գերմանացի փիլիսոփայ Ֆրիտրիխ Նիցշէ իր ծայրայեղ աստուածամերժութեան համար ներբողեց անհատականութիւնը, կամապաշտութիւնը և գերմարդի երկրպագութիւնը: Նիցշէականութիւնը կը հանդիսանայ Ֆաշիզմի և Նացցիզմի հիմնական աղբիւրներէն մէկը, Լեւի Թոլստոյը, Նիցշէն անուանեց խելագար, և յիրաւի, նիցշէականութիւնը խելագար մտքի ծնունդ է: Որովհետեւ անոր տարփողած անհատապաշտ ու "ես"ասէր ազահութիւնը՝ մարդկութիւնը դատապարտեց փճացումի և պղծուած ապագայի: Համաշխարհային երկրորդ Պատերազմին, նիցշէական տեսաբանութեան պատճառաւ 53 միլիոն մարդկային հոգիներ մահացան ու կրկնապատիկն ալ հաշմանդամ եղան:

1. Ան կը հաւատար թէ կեանքը ունի ա՛յն իմաստը, ինչ որ ենթական կու տայ ի՛ր դատողութեամբ:

2. Ան ծանուց թէ Աստուած մեռած է:

Ան մեծ ազդեցութիւն ունեցաւ գերման ազգայնականութիւնը գերիվեր համարող տեսաբաններուն վրայ: Նիցշէ կոտորակեց ու փշրեց բազմաթիւ մշակութային ու կրօնական կարծիքներ Լթոյ Դարու:

3. Ան ներկայացուց Բրիտանական առաքինութիւնները՝ գլխութիւն, խոնարհութիւն, ազնուութիւն և անձնագոհութիւն, որպէս ոչխարամիտ բարոյականութիւն, որոնք պէտք են ջնջուիլ:

4. Փառաքանեց ուժ և զօրութիւն որպէս մարդկային յաջողութեան միջնորդ:

Վերոյիջեալ պատճառաբանութիւններու հետեւան՝ ով անստուգութիւնը տեղ գտաւ տարակուսող մտքերու մէջ, և յառաջ եկաւ 20րդ Դարու ոչ նչապաշտութիւնն ու անիշխանութիւնը: Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբոնումը, կը կորսնցնէ նաեւ *ճշմարտիտիւն ու կեղծիւն, սուտիւն և ուղիղիւն իրականութիւնը*: Երբ մարդկային ըմբոնումը հանդէպ ճշմարտութեան *ենթակայական և յարաբերական*, է ուրեմն **ի՞նչ է ճշմարտութիւնը**, ի՞նչ է ո՞ւր է և ո՞րն է ուղիղն ու սուտը: "Դիւահարի"ն մէջ, Ֆիտտր Sou-թոեւսկի կը պատճառաբանէ, թէ եթէ չկայ բացարձակ կշիռ և չափ (Աստուած) ուստի միակ տրամաբանական իմաստը և նպատակը մարդուն՝ անձնասպանութիւն է:

Որպէս քրիստոնեայ, երբ կը ջատագովենք Բացարձակին կարիքը, նոր սերունդը, կը ջանայ հակադրել մեզ իբր թէ կը պատկանինք ծերակուտական տեսութիւններու, ու կը ջանայ լռեցնել մեզ ըսելով. «Ձե՞ս կարդացած Այնշթայնի Յարաբերական տեսութիւնը: Յարաբերականութիւնը բնութեան մէջ՝ հիմնաւորեց Այնշթայնը իր հուշակաւոր Յարաբերականութեան թէորիայով: Ուստի յարաբերապաշտ Relativism տեսաբանութեամբ, ճշմարտութիւնը յարաբերական է և կրնայ տարբերիլ անհատէ անհատ, դպրոցէ դպրոց, ըստ *պարագայի*, առանց երբեք ընդունելու առարկայական չափանիշերու գոյութիւնը: Հետեւաբար մարդուն ճանաչողութիւնը՝ ուրեմն, կ'ըլլայ ենթակայական և յարաբերական:

Պաշտամունքի գլխաւոր նպատակը զԱստուած փառաբանել էր անցեալին, իսկ այսօր, մարդիկ յեղաշրջած են այդ ու տուած նոր իմաստ մը, որ կը կարծուի ըլլալ թէ Աստուծո՛յ նպատակը փառաբանել է մարդը...: Հոգեշինութիւնը և հոգեւորութիւնը այսօր գոյութիւն չունին, որովհետեւ ճշմարտութիւնն ու բարին յարաբերական կը նկատուին:

Նոր սերունդը կը մոռնայ, որ Ա. Այնշթայն ալ *ծերակուտական* մըն էր: Երկրորդ. Ա. Այնշթայն *բարոյականութեան* (ethics) ի մասին չգրեց իր "Յարաբերականութեան տեսութիւն"ը, այլ՝ ան գրեց *բնագիտութեան* (physics) ի մասին: Գիտութիւնը չունի մէկ հատ իսկ յաւիտենական օրէնք: Գիտութիւնը հիմնուած է յարաբերական օրէնքներու վրայ՝ սանդիմէթրին, կոամին և երկվայրկեանին, այսինքն՝ *միջոցին, կշիռին և ծականակին վրայ*: Ապրանքի Բանակութիւնն ու գինը յարաբերական են: Երկիրը մեծ է լուսնի համեմատութեամբ, բայց փոքր է արեգակի համեմատութեամբ:

Նիւթը կրնա՛յ ըլլալ յարաբերական, բայց ո՛չ երբեք ճշմարտութիւնը,

Բարին և Բացարձակը: Ինչո՞ւ:

Որովհետև մարդկային միտքը անզգալաբար Բացարձակին հետ կը չափէ ամէն բան: Մարդուն մէջ կայ նիւթէ՛ն անելի զօրեղ խոյանք մը, որ դէպի Բացարձակին ու Կատարեալին կ'ուղղէ անոր իղձը:

Հեթանոսութեան մէջ՝ փիլիսոփան էր բացարձակը, բանականութեան թելադրութեամբ գծուած ուղին, իսկ Բրիստոնէութեան մէջ բացարձակը *Գերբնականը, ԱՄՏԹԱՄ* է հաւատով և սիրով լեցուած: Ա՛յն Գերբնական Ջայնը որ խարխափումիդ և խաւարիդ մէջ՝ կեանքիդ ուղղութիւն կու տայ:

Յիսուս Բրիստոս և Սուկրատէս մեռան ճշմարտութեան համար: Սուկրատէսի համար ո՛չ մէկ տաճար կանգնած են: Սուկրատէս յորդորեց ժողովուրդը, որ ուղղութեամբ խորհին: Բրիստոսի դաստիարակութեան մէջ կայ Գերբնական հորիզոն և տարածք (Աստուած) ներկայէն դէպի ապագան, *իմաստ և յոյս*:

Քանի՞ հոգի *նահատակք ած* է նիցչեներու, Ռիչարտ Ռուպինսթայներու, Ըրնէսդ Ռընաններու համար, որոնք ուրացած են զԱստուած, ուսուցանելով անասուածութիւն առանց համոզումի, առանց հիմի, անգէտ ու անպատճառաբանեալ: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, կ'անջգնայ և *կ'իմաստազրկուի*:

Նորամուլութեան Բայթայոդ հոսանք մը կայ որ մոլեգնաբար կ'ուզէ ջնջել և փճացնել ամէն գեղեցկութիւն և սրբութիւն ու փոխարինել զայն հասարականութեամբ մը առանց եկեղեցիի, բարոյականութեամբ մը առանց կրօնի և մարդը՝ առանց Աստուծոյ: Բարոյագիտութիւնը ուսկից ծագում առած է, ի՞նչ բնագոյներու և ի՞նչ խորհողութեանց արդիւնքն է: Ոչ ոք ձեռնհաս է բարոյագիտութեան պատմականն ընելու: Բարոյագիտութիւնը ուղղակի ճառագայթո՛ւմն է Աստուածութեան:

Ստեղծագործութեան և արարչագործութեան ճանաչումն ու Աստուածայայտնութիւնը անբաժանելի բացայայտութիւններն են նոյն Արարիչ Աստուծոյ: Աստուած ստեղծեց ամէն ինչ, ոչ թէ անելցնելու համար Իր փառքը, այլ ցոյց տալու ու յարաբերելու համար մարդ արարածին հետ: Իր սէրը **արտայայտելու** համար:

"Խորհուրդ" բառը կը նշանակէ, թէ Բրիստոնէայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անջօջափելի, բայց *զգայի և իմանայի* հոգեկան Ուժերու և Կարողութիւններու հետ: Հաւատացեալը կը մտնէ Բրիստոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ'ամրանայ կը վայելէ հոգեկան ջնորհներ: Խորհուրդով Բրիստոնէան կ'ապրի երջանկութիւնը Աստուծոյ ներկայութեան: "Խորհուրդ"ը հանդիպումն է

Աստուծոյ և մարդու: Քրիստոս է շեղինակը իւրաքանչիւր խորհուրդին:

Անաստուածները աւելի *փաստ և բացատրութիւն* կը փնտռեն կամ կը հետապնդեն, քան թէ *յայտնութիւն, ապացոյց և վկայութիւն*: Ես գոհացուցիչ կերպով համոզուած եմ թէ կա՛յ ապացոյց և վկայութիւն Աստուծոյ գոյութեան, սակայն նոյն հարցումին էութեան ու գոյացութեան համար *գիտակա՛ն* փաստ մը չունիմ: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուած գիտական փաստարկութենէ

Գերազանց է, ու է՛ ԲԱՑԱՐՉԱԿԸ:

Փետրուար 2, 1997

Թորոնթօ

ՆԵՐՔՆԱԳՈՅՆ “ԵՍ”Ը

Ի՞նչ է կամ ո՞վ է իմ "ես"-ը: Ո՞վ եմ ես: Իմ անձնային անվանումը ի՞նչ է: Մեր "ես"ը մեր ամենամեծ թշնամին է, ու նույն ատեն մեր բարեկամը և յաջողութեան ելնարանը:

Արդի հոգեբանութեան մէջ չափազանց գործածական է "յաջողութիւն", "ես եմ" բառերը որպէս գործօն գորութիւն:

Օրինակ:

Այն անձը որ չի կրնար ըսել "ես եմ", կը դառնայ վարանոտ ու կը կորսնցնէ կեանքին ընծայած զանազան առիթները և յաջողութիւնները:

"Ես"ը կրնայ կերտել մարդը, ու նաեւ քանդել ու կործանել ենթական: "Ես"ը ա՛յն գորութիւնն է, այն ուժն է ու ազդեցութիւնը, որ միայն մարդ արարածի՛ն շնորհուած է ճանչցուած բոլոր արարածներուն մէջ:

Ինչո՞ւ միայն մարդուն շնորհուած է ու ո՛չ ուրիշ արարածներուն: Որովհետեւ միայն մարդ արարածն է որ ստացաւ աստուածակերպար յատկութիւն և նկարագիր: Բոլոր անոնք, որոնք կը մերժեն տիեզերքի աստուածաստեղծ գոյացութիւնը, չունին պատասխանը թէ մարդը ուրկէ՞ ստացած է իր ստեղծագործող անձնաւորութիւնը և անհատականութիւնը կամ հանգամանքը: Միթէ մայր հո՞րը պարգեւած է "ես"ին գիտակցութիւնը կամ ճանաչումը մարդուն: Միթէ հա՛յր ժամանա՞կը տուած է սոյն ինքնութիւնը: Արդեօք բնութեա՞ն գորութիւնները փոխանցած են մարդակերպ էակին իր "ես"ին ինքնագիտակցութիւնը:

Թէ՛ աստուածամերժը ու թէ՛ աստուածահաճոյ հաւատացեալը, երկուքն ալ կը *հաւատան*, որ մարդ արարածը **ստացած** է և ունի "ես"ի գիտակցութիւն մը, որ զինք կը մղէ դէպի ստեղծագործ բարձունքներու գագաթը և թէ՛ դէպի անդնդախոր յուսահատութիւն և կորուստը մահուան:

Վերոյիշեալ "ես"ի գիտակցութիւնը մեզի ցոյց կու տայ, թէ "ես"ը հզօր ու գերազանցապէս տիտանական գորութիւն մըն է, որ կրնայ գործածուիլ թէ՛ բարիի և թէ՛ չարի: "Ես"ը, անձի մը կամքի՛ն ընդմէջէն կրնայ դրակա՛ն կամ ժխտակա՛ն արդիւնք դառնալ: Ուստի, ուրկէ՞ կու գայ, կամ ո՞վ է անոր ակնադքիւրը:

Աշխարհի մէջ ամէն գրութիւններէն աւելի նուիրական սեպուած ու երկրպագութեան արժանացած գիրքը՝ Աստուածաշունչ Մատեանն է: 200 տարբեր լեզուներու թարգմանուած է Ա. Գիրքը: 1987էն ի վեր ցարդ 8 միլիոն Աստուածաշունչ հրատարակուած է

մինչեւ 1992: Աստուածաշունչը, նկատելի ազդեցութիւն ունեցած է համաշխարհային մշակոյթի զարգացման վրան: Ի՞նչ կ'ըսէ արդեօք Աստուածաշունչը "ես"ին նկատմամբ:

Խաջնարած Մովսէս երբ կ'արածէր իր Յոթոր աներոջ ոչխարներու հօտը, տեսաւ Տիրոջ հրեջշակը կրակի բոցով մորենիին մէջէն ու լսեց Աստուծոյ ձայնը որ զինք կ'ուղարկէր ետ դէպի Փարաւոն: Մովսէս հարցուց Աստուծոյ թէ որո՞ւն անունովը պիտի երթայ և որո՞ւն պատգամաւորը պիտի դառնայ ինք: Աստուած ըսաւ Մովսէսի. «Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ: Եւ ասէ, «Այսպէս ասացես ցորդիսն Իսրայելի, "ՈՐ ԷՆ" առաքեաց զիս առ ձեզ»--Ելից Գ.14: Աջխարհաբար լեզուով սապէս կը կարդանք.

«Մովսէս ըսաւ Աստուծոյ. "Երբ ես երթամ Իսրայելի որդիներուն ու ըսեմ անոնց՝ Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի դրկեց՝ և երբ ըսեն ինձի թէ՛ Ի՞նչ է անոր անունը, ի՞նչ ըսեմ անոնց»: Աստուած ըսաւ Մովսէսի. «Ես եմ ՈՐ ԷՆ»: Եւ ըսաւ. "Այսպէս պիտի ըսես Իսրայելի որդիներուն. Ձիս **ՈՐ ԷՆ** դրկեց ձեզի»:

Հին Կտակարանին մէջ արձանագրուած "Եհովա" մակդիրը, որ Աստուծոյ յատուկ անունն է, կը նշանակէ *"Ես եմ, որ եմ"*: "Եհովա" անունը կը նշանակէ՝ *Աստուած, Տէր, Արարիչ, Հայր, Ամենակալ* եւլն:

Աստուած Իր Մովսէս մարգարէին միջոցով կը յայտնէ մարդուն, թէ Ի՞նքն է "Ես եմ"ը, այսինքն "Որ ԷՆ", "Նա որ Է՛", "Նա որ կայ": Վերոյիջեալ բացատրութիւններուն համար Առաքելական Եկեղեցիներու խորանին վրայ կը տեսնենք գլխազիր **"Է"** տառը:

Աստուած Ի՞նքն դրոջմած է այդ " Է"ն, այդ խորիմաց՝ ծածուկ իմաստ թելադրող ու թափուն ուժ գօրութիւնը մարդ արարածին իսկութեանը մէջ: «Ես»ը մարդ էակին բարոյական նախասիրութիւնն է: "Ես"ականութիւնը առանց Աստուծո՛յ *օժանդակութեան*, յոխորտանք և չարիք է՝.

1. Մարդ կ'ապրի ո՛չ միայն ինքզինքին համար, այլ ազգին և համայն մարդկութեան համար, ինչպէս մեր Տէրը Յիսուս Զրիստոս:

2. Ամէն մէկ "ես"ականութիւն առանց Բարի՛ին աջակցութեան, բարոյական մահ և անձնասպանութիւն է: "Ես եմ"ի *ժխտակա՛ն* ու մահացու վախճանը, առարկայականօրէն, կը տեսնենք Եսայեայ մարգարէի ԺԳ.12-15 համարներուն մէջ, ուր ան կ'ըսէ.

«Ով առտուանց ծագող Արուսեակ,
 Ի՞նչպէս երկինքէ ինկար
 Ու մինչեւ գետին կործանեցար,
 Դուն որ ազգերը նկուն կ'ընէիր,
 Դուն սրտիդ մէջ ըսած էիր
 Երկինք ելլ"եմ"
 Ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրա-
 ցն"եմ",
 Եւ ժողովի լեռը, ձիւսիսի բովերը բնակ"իմ",
 Ամպերու բարձրութիւններուն վրայ ելլ"եմ",
 Բարձրելոյն նման"իմ":
 Բայց ահա դժոխքը կ'իջնես, գութին խորունկ տեղերը,
 Զեզ տեսնողները բու վրադ պիտի գարմանան:
 . . . Դուն գարջելի ընձիւղի մը պէս,
 Գութի փարերուն մէջ իջնող
 Արով խոցուած մեռելներուն ֆանդերձին պէս,
 Ուրի տակ կոխուած դիակի պէս
 Զու գերեզմանէդ դուրս նետուեցար:

Վերոյիշեալ մարգարեական դատապարտութիւնը, որ ցոյց կու տայ Սատանային վախճանը, է՛ նաեւ բոլոր անոնց համար, որոնք "Ես եմ"ը կը գործածեն իրենց անձի՛ն շահուն և իրենց "ես"ին փառասիրութեան համար:

Զրիստոնեան «Ես»ակեղրոնէն դառնալու է դէպի համակեղրո՛ն «ես»ը, այլ խօսքով դէպի "մեր"ը որ կը ներկայացնէ մեր ցեղը, մեր ազգը և ամբողջ մարդկութիւնը:

Արդի Արեւմտեան հոգեբանութեան մէջ կը շատագովուի "I am"-ի "Ես եմ"ի իտէալը՝ ժամանակաւորը, ցնդաբանականը, և կեղծը (the counterfeit)ը: Ա՛յս պատճառաւ է, որ բազմաթիւ յաջողած անձեր, որոնք կը կարծուին երջանիկ ըլլալ, անձնասպանութեամբ կը փակեն իրենց "Ես եմ"ին աչքերը: Աշխարհի բազմաթիւ կեսարները, տիտաններ կարծուածները, Նափոլիոններն ու Հիթլերները, որոնք կախարդեցին միլիոնաւորներ իրենց "Ես եմ"ներով, ի վերջոյ տապալեցան ու կորան իրենց "Ես եմ"ներու երազանքներովը:

Մարդ արարած ի՞նչպէս կրնայ արժեւորել իր "Ես եմ"ը ու դարձնել զայն դրակա՛ն զօրութեան: Մեր Տէրը Յիսուս Զրիստոս ալ շատ անգամներ ըսած է "Ես եմ": Կարդանք միասին իր "Ես եմ"ները:

Յիսուսի եօթնանկիւն «Ես եմ»ները.

1. *«Ես եմ կենաց հացը»*-Յով. 2. 35, 48,41

2. «Ես եմ աշխարհի Լոյսը»-- Ը. 12
3. «Ես եմ ոչխարներու Գուռը»--Ժ. 7
4. «Ես եմ բարի Հովիւը»--Ժ. 11
5. «Ես իսկ եմ Յարութիւն և կեանք»--ԺԱ. 25
6. «Ես եմ Ճանապարհը և Ճշմարտութիւնը և կեանքը»--ԺԴ. 6
7. «Երբ Մարդու Որդին բարձրացնէ՛, այն ատեն պիտի գիտնա՛ք թէ **Ես եմ**, և թէ ոչինչ կ'ընեմ ես ինձմէ, այլ կը խօսիմ այն՝ ինչ որ Հայրս սորվեցուց ինձի»--Յով. Ը. 28:

Յովհաննէս Մկրտիչ, որ կոչուած է մեծագոյն մարգարէն, իր անձին համար կու տայ հետեւեալ վկայութիւնը երբ հրեայ դեկավարներ երուսաղմէն քահանաներ և Ղեւտացիներ դրկեցին իրեն՝ որպէսզի հարցնեն.

«Ո՞վ ես դուն»: Անիկա առանց վարանելու խոստովանեցաւ և յայտարարեց, ըսելով.

«Ես չեմ» Քրիստոսը: Ես *«անապատին մէջ աղաղակողին ձայնն եմ»*.

Յովհաննէս Մկրտիչ կ'ըսէ. **«Ես չեմ»**, իսկ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. **«Ես եմ»:** Ինչո՞ւ Միածին Յիսուս կը համարձակի «Ես եմ» ըսել:

Պատճառը:

Յովհաննէս Մկրտիչ իր հրեղէն ներշնչումով սապէս արտայայտուած է իր աջակերտներուն, ըսելով.

«Մարդ ինքնիրմէ ոչինչ կրնայ ընել, եթէ իրեն վերէն՝ Աստուծմէ սրուած չէ»:

Յովհաննէս Մկրտիչ կը շարունակէ իր ներշնչումը ու կ'ըսէ. «Ան որ Աստուծմէ կու գայ՝ բոլորէն գերիվեր է: . . . Որովհետեւ Աստուած իր հոգին ամբողջապէս անոր տուած է: Հայրը կը սիրէ Որդին և ամէն ինչ անոր յանձնած է»--Յով. 4.31-34:

Յիսուսի բացատրութիւնը և Իր "Ես եմ"ին իշխանութիւնը.

1. Ան կ'ըսէ. «Հաստատ գիտցէ՛ք, թէ Մարդու Որդին ինքն իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ:

2. Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն

Որդին, ինչպես որ Հայրը կը պատուեն:

3. Հաստատ գիտցե՛ք, ժամանակ կու գայ և արդէն իսկ եկած է, երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն և լսողները պիտի ապրին: Ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը և դուրս գան:

4. Ես ինձմէ չեմ կրնար դատել, այլ կը դատեմ այնպէս՝ ինչպէս Հօրմէս կը լսեմ. և ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ *իմ կամքս*, այլ ***կամքը Անոր՝ որ զիս որկնեց***»--Յով. 5.19-30:

Վերոյիշեալ պատմագրութեան մէջ ամենայատկանշակա՛ն խօսքերը վերջին նախադասութեան մէջ կը գտնուին, ուր Յիսուս կ'ըսէ.

***«Կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս,
այլ կամքը Անոր՝ որ զիս որկնեց:***

Մարդ արարածը մինչեւ որ իր ստացած աստուածաշնորհ կամքը բոլորովին և ազատօրէն չյանձնէ ու չվստահի Աստուծոյ, իր «Ես եմ» կամքը որքան ալ ուղիղ, արդար և ճշմարիտ երեւնայ, կրնայ վերստին խտտորիլ, սխալիլ և մոլորիլ: Հետեւաբար անասուեր Լոյս Յիսուս կը դաստիարակէ իր աշակերտները Ի՛ր իսկ սուրբ առաքելութեամբ ու կ'ըսէ.

1. *«Ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը Անոր՝ որ զիս որկնեց»*--Յով. 2.38:

2. *«Ան որ իր հետինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զիմք՝ Դրկորդին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է և խաբէութիւն չկայ անոր մէջ»*--Յով. Է.18:

3. *«Երբ Մարդու Որդին բարձրացնե՛ք, այն ատեն պիտի զիտեմք թէ Ես եմ, և թէ ոչ ինչ կրնեմ ես ինձմէ, այլ կը խօսիմ այն՝ ինչ որ Հայրս սորվեցուց ինձի»*--Յով. Ը.28:

4. Դազարոսի Բոյրը Մարթա ըսաւ Յիսուսի. «Հիմա իսկ գիտեմ, թէ ի՛նչ որ Աստուծմէ ինդրես՝ Աստուած քեզի պիտի տայ»:

Աստուածայայտնիչ Վարդապետ Յիսուս ըսաւ. ***«Ե՛ս եմ յարութիւնը և կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի»***--Յով. ԺԱ.25:

Արդի մարդը խելայեղօրէն կը վազէ իր «ես»ին գոհացում տալու: Իսկ հաւատացեալ մարդը իր աւօրեայ «ես»էն՝ իր կաւի պատեանէն պարտի դուրս ելլել և դառնալ իր Տուխչին՝ Աստուծոյ: «Ես»ի և փառամոլութեան հակադրութիւնը՝ հաւատի՛ աշխարհն է, գաղափարականի և բարոյական գեղեցկութեան աշխարհը: Մեր եսը

մեր ամենամեծ թշնամին է եթէ զայն Աստուծոյ սպասաւորութեան չնուիրենք: «Ես»ին կեղեր ճաթեցնելով դուրս պետք է խոյանայ հոգին ու նուիրէ զայն Աստուծոյ:

Մարդ երբ նուիրէ իր "Ես եմ"ը Աստուծոյ, այն ատեն ան կը դառնայ աջակերտը Յիսուս Քրիստոսի: Յիսուս Իր աջակերտներուն ըսաւ.

«Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը (եւ եմ)ը, անձ իր խաչը և ետեւէս գայ: Որովհետեւ ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, և ո՛վ որ ինձի համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի գտնէ զայն»--Մատթ. ԺԶ.24-25:

Անձը ուրանալ խամաճիկ ըլլալ չի նշանակեր, այլ իրմէ աւելի բարձր, զօրաւոր և սիրո՞ղ Հոգիի մը ազդեցութեան և առաջ-նորդութեան ենթակայ ըլլալ կը նշանակէ: Մեր Տէրը Յիսուս Իր երկնային փառքը, Իր արժանապատուութիւնը և "Ես"ը մարդոց փրկութեան նուիրելով եկաւ մարդաշխարհ: Մակայն այս բոլոր անձնուրացութեան մէջ Ան ուրիշին ձեռքին մէջ խաղալիկ չեղաւ, որովհետեւ Ան կ'ըսէ.

1. *«Ես առանձինն չեմ, այլ իմ հետս է նաեւ զիս որկրող Հայրը».*
2. *«Ես եմ իմ մասիս վկայողը, և Հայրը որ զիս որկնեց՝ Ան ալ կը վկայէ իմ մասիս».*
3. *«Յո՛ւք ո՛չ զիս կը ճանչնա՛ք, ո՛չ ալ Հայրս: Որովհետեւ եթէ Ձիս ճանչնայի՛ք՝ Հայրս ալ ճանչցած պիտի ըլլայի՛ք»--Յով. Ը.19:*
4. *«Դէիկնց կ'ընեմ ես ինձմէ, այլ կը խօսիմ այն՝ ինչ որ Հայրս սորվեցուց ինձի: Եւ ան որ զիս որկնեց՝ ինձի հետ միասին է: Անիկա զիս առանձին չձգեց, որովհետեւ միշտ կը կատարեմ այն՝ ինչ որ հաճելի է իրեն»--Յով. Ը.28:*

Օրինակ.-

Ինչո՞ւ համար երաժշտութեան ուսանող մը, վարպետ երաժշտագետի մը կը յանձնէ իր "Ես եմ"ը: Աջակերտ մը կը խոնարհի ու կը հնազանդի: Որպէսզի ինքն ալ դառնայ հոչակաւոր դաջակահար: Աջակերտ մը, ուսանող մը իր "Ես"ը ծառայութեան նուիրելէ՛ն յետոյ կը գտնէ իր անձնաւորութիւնը և մեծութիւնը: Խրիմեան կաթողիկոս՝ իր "հայրիկ" անունը կաշառակերութեամբ չստացաւ, այլ իր անձը, իր "Ես"ը ազգին համար զոհելով ու ծառայելով անոր: "Ես"ասիրութեամբ մարդ կը մեկուսանայ ընկերութենէն և կ'անջատուի Աստուծմէ: "Ես"ասիրութեան դրօշին տակ մարդ արարած փոխանակ բարձրանալու և աստուածանալու, կը թաւալի դէպի վատութիւն ու դէպի կորուստ:

Աստուծո՛վէ անջատուած ճշմարիտ կեանք (անձնաճանաչում)
չկայ: Կարդանք Յիսուս Քրիստոսի խօսքերը.

1. «Ես եմ ճշմարիտ որթատունկը, և Հայրս մշակն է»:

2. «Ինձի միացած մնացե՛ք և ես ձեզի միացած պիտի մնամ:
Ինչպէս որ ծիւղը ինք առանձին պտուղ չի տար՝ եթէ որթատունկին
միացած չըլլայ, նոյնպէս ալ դուք չե՛ք կրնար պտուղ տալ՝ եթէ ինձի
միացած չ'ըլլաք»: «Արովհետեւ առանց ինձի դուք ոչինչ կրնաք
ընել»:

3. «Եթէ ինձի միացած մնաք և խօսքերս ձեր մէջ մնան,
խնդրեցե՛ք Աստուծո՛վէ ինչ որ ուզե՛ք և պիտի տայ ձեզի»:

4. Մնացե՛ք իմ սիրոյս մէջ *(ձեր "ես"ը յանձնեցե՛ք Իմ
զօրութեանս)*: Եթէ գործարդե՛ք իմ պատուիրաններս իմ սիրոյս մէջ
մնացած պիտի ըլլաք»:

Մարդկային "ներքնագոյն ես"ը ըմբռնելու միակ միջոցը
հասկնալ է Յիսուս Քրիստոսի աղօթքին յետագայ *խորհուրդ խորին*
խօսքերը.

*«Կաղօթեմ որ անտե՛ք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դու և
ն'ի Հայր, իմ մէջս ես և ես քու մէջը, այնպէս ալ անտե՛ք մեր մէջ
ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դու ն որկեցիր զիս: Այն
փառքը որ ինձի տուիր՝ իրենց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ
ես և դու ն մէկ եմք: Ես անոնց մէջ ըլլամ և դու ն՝ իմ մէջս, այնպէս
որ անտե՛ք կատարեալ կերպով մէկ ըլլան, որպէսզի աշխարհը գիտնայ
թէ դու ն որկեցիր զիս և թէ սիրեցիր զանտե՛ք, ինչպէս որ դու ն զիս
սիրեցիր»--Յով. ԺԷ.21-23:*

**Յու նուար 7, 1997,
Թորոնթօ**

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Ղուկ. ԺԵ. 11-32

Նկարագեղ պատկեր մը աւելի կը խօսի քան թէ գիրքի մը բոլոր պարունակութիւնը: Յիսուս՝ մարդկային ըմբռնումի մէջ զԱստուած մարդացնելու ինքնաշատուկ և անկապտելի զօրութիւնը ունի: Ան ոչ միայն կը պատմէ, այլ կը նկարէ և կ'առարկայացնէ Իր պատմութեան բները:

«Անառակ»ին առակը, ոչ միայն կը հետաքրքրէ մանուկներն ու պատանիները, այլ կը յուզէ նաեւ չափահասները: Ոգեկան ներհայեցողութեամբ կը ներթափանցէ խորհուրդներու ընդերքը ու մարդը կը փոխակերպէ դէպի բարին: «Անառակ»ը պատմագրութիւնն է ամէն մի մեղաւոր մարդու, որ տեսնելով և ճանչնալով իր անկումը, կը զղջայ և կ'ապաշխարէ: Կը դառնայ և կը վերադառնայ դէպի այն Ծոցը ուր մտայդացուած և որոջուած էր ըլլալ ժառանգորդը աստուածային յատկանիշներու և առաքինութիւններու:

«Անառակ Որդի»ին առակը ընթերցողներ, ընդհանրապէս, կը տեսնեն հօր մը անհնազանդ զաւակը որ իր ցոփակեաց կենցաղավարութեան պատճառաւ կը գտնէ իր արդար *պատիժը* դառնալով սովահար խոզարած մը:

Մեր Տէրը՝ Յիսուս Զրիստոս սոյն խորհրդանշական տուամով, ջանաց գեղանկարել *Հայր Աստուծոյ Մէրը*, քան թէ մեղաւոր խոզարածը:

Ի՞նչու:

Որովհետեւ, նախորդ և յետագայ առակներուն մէջ, Յիսուս կը բարոզէ *Բարի Հովիւի*-ն մասին և դրամը կորսնցնող *կնոջը* մասին: Եփսոս հետաքրքրաշարժ է տեսնել թէ Յիսուս, մեր դատաստանական չափանիշով, չի՛ մօտենար մեղաւորներուն:

1. Դիտենք Յիսուսի և Փարիսեցիի մը մօտեցումը հանրային կնոջ մը նկատմամբ, երբ Մագդաղենացին կը լուայ Յիսուսի ոտները իր արցունքներով ու կ'օծէ զանոնք անուշահոտութեամբ:

2. Սամարացի կնոջ մը և Յիսուսի հանդիպումը Յակոբ Նահապետի ջրհորին եզերքը: Յիսուս կը խօսակցի Սամարոհիին հետ ջատ քնական կերպով, մինչ աջակերտները կը խռովին:

3. Յիսուս կը բարոզէ սրահի մը մէջ, երբ քանի մը բարեկամներ կը բակեն առաստաղը և Յիսուսի առջին կ'իջեցնեն իրենց անդամաւոր ընկերը: Մարդասէր Յիսուս սոյն անդամաւորը կը կոչէ *«Տրդեանք»* և ոչ *«մեղաւոր»*:

4. Յիսուս կ'ընտրէ երկու մաքսաւորներ և կը մասնակցի անոնց

(Զաֆեոսի և Մատթեոսի) խնճոյֆին: Առանց զանոնք մեղաւոր կամ վաշխառու համարելու:

Յիսուս Բրիստոսի կժու սաստը, սովորաբար ուղղուած կ'ըլլայ բարեպաշտներու, հոգեւորականներու և կեղծաւորներու: Մատթեոս Առաքեալի Աւետարանին 23րդ գլուխը կը պոռթկայ Գալիլեացի Մարգարէին «Վայ»երով «իժերու ծնունդ»ներով, ու «ծեփած գերեզման»ներ որակումներով: Կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուս, մագնիսական ձգողականութեամբ կը մօտենայ մեղաւորներուն: Որովհետեւ իսկական մեղաւոր մը՝ ի վաղու՛ց խղճահար է իր յանձանքներուն համար: Իսկ կեղծաւոր բարեպաշտին սիրտը *հարացած է ու պետք ունի հոգեպէս հարուածուելու*: Որքա՛ն բնութեւն Յիսուս կը խօսի Իր Բովի խաչեալ աւազակին հետ և կը յուսադրէ զայն որպէս ուխտաւոր մը դէպի Դրախտ:

Վերադառնանք «Անտառակ»ին արակը կոչուած աստուածայայտնութեան: Բարութեան մարմնացեալ Անհատականութիւնը, Իր լուսեղէն Ձեռներով կը գեղանկարէ երկնաւոր չայրը: Հոն կը տեսնենք Աստուած, որ շնորհաբաշխ է: Իր ստացուածքը կը բաժնէ անաչառօրէն թէ՛ տան հնազանդ որդւոյն և թէ՛ անտառակին, հոգ չէ որ ան պիտի մսխէ պապենական դարաւոր ժառանգութիւնը: Աստուած այս արակին մէջ, կը պատկերացուի որպէս տագնապող ձոզի որ անտրտունչ հեծութեամբ ընդառաջ կ'երթայ Իր անտառակ որդւոյն առաջարկին:

Չայր մը՝ իր զաւակին ի՛ր նկարագիրը չի՛ կրնար փոխանցել, այլ միայն մարմնակա՛ն իր նմանութիւնը և կերպարը կու տայ: Հոգեկան և իմացական դրոշմը, զաւակ մը ի՛նք միայն կրնայ կերտել իր մէջ, եթէ փափաքի: Այս դժուար և կնճռոտ հարցին պատճառաւ է որ ցաւատանչ աշխարհ մը գոյութիւն ունի տիեզերքի մէջ, ուր *Աստուծոյ երեսը կը խնդայ, բայց Միրտը կուլայ*: Ինչպէս անտառակին հայրը թէպէտ նախատեսեց «սովահար խոզարած որդին» բայց ակամա՛յ բաժնեց իր ստացուածքը: Որովհետեւ իր սիրած փոքրիկ տղուն սիրտը՝ ի վաղուց մեկնած էր օտար երկիր: Միայն անոր մարմինն էր, որ կմախկաքայլ կը տատանէր տան մէջ:

Աստուած բռնատէր մը չէ՛ որ մեզ պարտադրէ Իր Բով պահել: Մարդ-արարած ի՛նքը հեռանալով իր Ստեղծիչէն պիտի կորսնցնէ իր ապրելու իրաւունքը: Մարդ մերժելո՛ւլ յաւերժական կեանքը, ի՛ր իսկ կամեցողութեամբ պիտի կորսուի անյայտութեան մէջ:

Մարդ-արարած ինքնախաբէութեամբ երբ հեռանայ Աստուծմէ և մոլորի, դեռ կը շարունակէ իր մէջ մնալ ջողարձակ կայծ մը, որ մարդը կը զանազանէ անասունէ: Այդ կայծը «խորհի՛լ»ն է և «մտածե՛լ»ն է, Աստուծոյ շնորհած «ինքնութեան»:

Մրբազան Աւետարանագիրը կ'ըսէ,

«Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ»:

«Այն աստն ինճզինճին գալով՝ ըսաւ»

Մարդ ի՞նչպէս ինճզինճին կու գայ: Միթէ մարդ կրնա՞յ ինճզինճէն հեռանալ: Մարդուս «ինճնութիւն»ը այն աստուածային կայծն է, որ «անձնականութիւն» կը կոչենճ: Երբ մարդու մը անձնականութիւնը կորսուի, գրաստի կը վերածուի ան: Կարգ մը մարդիկ բունութեան և հալածանքի ներքեւ, կը կորսնցնեն իրենց անձնականութիւնն ու ինճնութիւնը, և ոմանք ալ ցոփութեան և զեխութեան մէջ:

«Նորհիլ»ը, մարդը կ'աստուածացնէ, որովհետեւ միայն որունու-մով և խորհրդագգաց մտածումներով մարդ Աստուծոյ հետ կը յարաբերի: Մատանային առաջին գործը կ'ըլլայ, մարդը այնքա՞ն գբաղ պահել, որ ժամանակ չ'ունենայ խորհելու և «ինճզինճին գալու»: Յորդ դարու մեծագոյն սովը՝ *մտածելու և խորհելու* չգոյութիւնն է: Մարդիկ, մանաւանդ Արեւմուտքի մարդիկը, այնքա՞ն գբաղ են որ ժամանակ չ'ունին *խորհելու*:

Գրաբար թարգմանութեան հրաշալիութիւնը կը տեսնենք *«Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ»* համարին մէջ: Ու՞ր էր այս «անառակին» միտքը: Անառակին միտքը կալանաւորը եղած էր Մատանային: Մարմնական ցան ու կսկիծը, որ յաճախ ժխտական երեւոյթներ կը կարծուին ըլլալ, երբեմն կ'ունենան նաեւ իրենց բարի արդիւնքները: Անթութիւնն ու նուաստացուցիչ զգացումը Անառակը արթնցուցին տեսնելու իր իսկական և թշուառ վիճակը: Մատանային մեծագոյն վախը և պարսութիւնը կը սկսի, երբ մարդ *խորհիլ և մտածել* կ'սկսի:

Ճատեր հարցում ըրած են, թէ Աստուած ի՞նչ կ'ընէ: Աստուած *կը սպասէ*: Ան ակնկալութեամբ և յոյսով կը սպասէ դարձը Իր բոլոր զաւակներուն, որովհետեւ իւրաքանչիւր անձ դրոջմուած է Աստուծոյ կերպարով: Թէեւ մենք զիրար կը գատորոջենք՝ ազգայնապէս, դաւանանքով և կրօնքով, սակայն Աստուծոյ համար բոլորս ալ Իր դրոջմաւոր զաւակներն ենք:

«Եւ մինչ ատկաւին հեռու էր՝ հայրը տեսաւ զայն ու զթաց, ելաւ և վազեց անոր ընդատաջ, վիզին փաթթւեցաւ և համբուրեց զայն»:

Ի՞նչ հարազատ և անխարդախ բացատրութիւն երկնաւոր Հայր Աստուծոյ: Անկարելի է որ կաւաջէն և հողածին մարդ էակ կարենայ թարգմանն ըլլալ այսպիսի ճաճանչագեղ աստուածային Միրոյ:

Մոյն առակին պատմութիւնը, նաեւ ապացոյց է Յիսուսի Աստուած Որդիութեան:

Կրօնական պատմագիտութեան մէջ ո՞ր մարգարէն կամ ո՞ր իմաստասէր հանճարեղ բանաստեղծը կարողացած է յայտնաբերել վերոյիշեալ գերհզօր սիրո՞յ Աստուածը:

Ո՛չ մէկ կրօն, ու ո՛չ ուրիշ հաւատք:

Գիտնականներ միլիոնաւոր լոյսի տարիներու հեռաւորութեան մէջէն կը դիտեն անջրպետի հեռաւոր աստղերը: Աստուած ալ, որ Տէրն է ժամանակին, յոյսով կը սպասէ բու և իմ վերադարձին: Աստուած դատաստանի չի ֆաշէր մեղաւորը կամ Զինք ուրացողը: Ի՛նք կը վազէ դէպի վերադարձող մեղաւորին: Մեղաւորի մը վերադարձը, ինքնի՛ն խոստովանանք և ապաշխարութիւն է: Աստուած Ի՛նք կ'երթայ դիմաւորելու կորուսեալ մեղաւորը: Ան մեղաւոր խոգարածին պատուած ցնցոտին չի տեսներ և ոչ ալ կը զգայ կամ նկատի կ'առնէ թշուառականին գարջահոտութիւնը: Անոր աչքը սեւեռած է այն անձի՛ն որ կը կրէ Իր կերպարը և որուն սրտին իւրաքանչիւր տրոփը կը ձայնէ Իր Անունը:

Աստուած չի՛ վարանիր փաթթուելու վիզը կեղտոտ և գարջահոտ խոգարածի մը չ'աղտոտելու համար Իր բեհեզեայ զգեստաւորումը: Որովհետեւ աստուածային Սրբութիւնը չ'աղարտուիր, այլ կը սրբացնէ և կը նուիրագործէ ի՛նչ բանի որ հայի:

Աստուածային բարի կամեցողութիւնը երբ Յիսուսի կենդանի խօսքով կոյրին տեսութիւն կու տայ, բորոտը կը մաքրէ, դիւահարը կ'ազատագրէ և մեռեալները կը վերապրեցնէ, որքա՞ն անլի փրկարար հոգեփոխութիւն (վերստին ծնունդ) պիտի չ'ներգործէ գղջացող և ապաշխարող մեղաւորի կեանքին մէջ, ըլլայ այդ՝ մաքսաւոր Զաքէոս մը, հոգեկան արկածեալ հանրակին մը, ուրացող Պետրոս մը կամ թերահաւատ Թովմաս մը:

«Եւ համբուրեց զայն»: Ինչպէս նկար մը ամբողջ գիրք մը կը պատկերացնէ, նոյնպէս «համբոյր մը», երկու ջրթներու հպումը, նշանակ է հաշտութեան, փոխադարձ սիրոյ և միաբանութեան:

Յոյսով ակնկառոյց հօր մը համար, «անառակ»ին տուն վերադարձը՝ անսպառ սիրոյ ծննդագործ երկունքի մը յաղթանակն էր: Կարգ մը անձեր, կը թաղեն իրենց վիշտն ու բարոյալքումը՝ պարի՛, խնճոյքի և խմիչքներու մոռյլ ուրախութեանը մէջ: Մակայն Յիսուսի յայտնաբերած Հայրը՝ կը սարքէ խնճոյք, պար և ուրախութիւն որպէս սիրո՞յ անպարտելիութեան հերոսական հաւաստիքը:

Անառակին հօրը յայտնաբերած բազումողորմ սէրը հանդէպ իր զաւկին, մարդկութիւնը ֆայլ մը եւս մօտեցուցած է Աստուծոյ, ոչ միայն հաւատալու և հնազանդելու, այլ՝ **սիրելու** և վստահելու

Աստուծոյ գլխարտութեան և ողորմածութեան:

Անառակ խոզարածին տուն վերադառնալու միակ գրաւականը՝
իր հօր անվերապահ և անսակարկ **սիրոյ ոգին** էր: Միւրոյ այս
անասա՛ն հաւատֆին վրայ հիմնուած է Զրիստոսաջունչ մեր
հաւատֆն ու անդենականի երաջխիֆը:

Ապրի՛ այս կենսանորոգ և Յիսուսաբոյր հաւատֆը և գիտակ-
ցութիւն ներշնչէ մեր կրօնին և հաւատֆին:

Մայիս 20, 1990

Թորոնթօ

Օրհնութիւ՛նդ, Հայր, փշրած եմ կուռֆս անհանձար՝

Որ զիս խափեց չարաչար:

Ա՛լ չեմ մօտիր ես երբեք:

Որ զիս լըֆեց սովաբեկ:

Օրհնութիւ՛նդ Հայր, ըզգըլխանֆիս անդունդին

Զափած եմ խորֆը մըլթին:

Ա՛լ կը սոսկամ այն վայելֆէն՝ որ կիրֆի

Ամպոռայներով կը մըրկի:

Օրհնութիւ՛նդ, Հայր, բոցը մարած է հրայրֆիս՝

Որ մոխրակոյտ մ՛ըրաւ զիս:

Ա՛լ գիրկէս զատ տեղ մը չ՛ունիմ ապահով՝

Ուր թաղուիմ պինդ գորովով:

Օրհնութիւ՛նդ, Հայր խոզի լախրջ աղտերէն

Ա՛լ սրբուած է հոգիս,

Վարձկանդ ըլլամ ըզֆեզ պաշտեմ, Դու նորէն

Իբրեւ Աստուած օրհնէ՛ զիս:

**--Եղիջէ Եպս. Դուրեան
(Հովուական Սրինգ)**

“ՍՏԵՂԾ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾ ԶՍԱՐԳՆ ՀՈՂ ՅԵՐԿՐԷ”

Աստուած ինչո՞ւ համար, մարդ էակը, հողէ՛ ստեղծեց:

Մարդ էակի հողաշինումը չի ստորադասեր զայն: Հողը ո՛չ նուաստացուցիչ է և ո՛չ ալ ստորնացուցիչ: Տիեզերքի մէջ *միայն* հո՛ղն է, որ ճանչցուած է իր բերրիութեամբ և արգաւանդութեամբ:

Ի՞նչ կրնան արտադրել ոսկիի կամ արծաթի փոշիները: Միթէ ցորենի հատիկները ադամանդի՞, յակինթի՞ կամ կարմիր շափիւղա- յի՞ մէջ կը ցանեն: Ո՛չ: Արժեքաւոր կարծուած այդ փոշիներուն մէջ, կենսալիր հունտերը կ'որդնոտին... Այդ բոլորէն շատ աւելի արժեքաւոր է այն հողը, որ մեր ոտքերով կը կոխկուտենք և որուն մէջ մեր աւելցումները կը թափենք:

Խոնարհ և համեստ հո՛ղն է, որ կը կերակրէ համայն մարդ- կութիւնը և կենդանական աշխարհը: Հո՛ղն է որ կը պարգևէ ատաղձն ու նախանիւթը կառուցանելու մեր ջենջող օճախները և գեղարուեստատեսիլ քանդակագործութիւնները: հողի շնորհիւ մարդ կը դառնայ աշխատասէր և արուեստագէտ: Հողը նիւթական բարիքներու անսպառ շտեմարանն է, եթէ մարդ չ'ապականէ զայն իր «*յառաջադիմութիւնն*» կարծուած ժանտասպան (pesticide) տար- րերով:

Մոռնալու չէ երբեք, որ թէպէս Աստուած՝ Ի՛նք ստեղծեց կենդանական աշխարհը (ձուկերը, բոյսերը և կենդանիները) սակայն զանոնք արտադրող (թանձրացեալի կերպաւորող) նախանիւթ տարրը՝ մայր *Հո՛ղը* եղաւ: Ինչպէս կը կարդանք Մ'ննդոցի մէջ.

1. «Աստուած ըսաւ. *Ձուրերը* կենդանութեան ջունչ ունեցող շատ սողուններ *հանեն*»--Ա.20:

2. «Եւ ըսաւ Աստուած, *Երկիր* թող հանէ ջնջաւոր կենդանի՝ իր տեսակին պէս, անասուններ, սողուններ ու երկրի գազաններ՝ իրենց տեսակին պէս. և այնպէս եղաւ»--Ա.24:

Տէր Աստուած մարդ էակը ստեղծեց տիեզերքի լաւագոյն և ամենաբերուն նախանիւթէն՝ *հողէն*: Եթէ պատահի, որ երկրի հողը փճանայ կամ ապականի, կեանքը այնպէս ինչպէս ճանչցած ենք կ'անյայտանայ:

Մարդ արարած հողէ կը բաղկանայ (հող էիր դուն, ու հողի պիտի դառնաս--Մ'ննդոց Գ.18): Բայց մարդը նիւթէ աւելի բան մը եւս ունի իր մէջ: Նիւթէն Գերազանցապէս յաւելեալ մասը մարդ էակին մէջ, անոր աստուածակերպար յատկանիշներն են՝ ինքնորո-

շումի ազատ կամքը, իմացական և գաղափարական մտատեսութիւնը, բարոյականի զգայականութիւնը և զգայնիկ հոգին, որ ջերմ աղերս ունին հաւատփի և խորհրդաբանութեան թափանցելու խիզախ խորացումին հետ:

Մարդ էակի հողակերտումը կամ կաւակերտ կառուցումները զինք բնաւ ստորադաս կամ անարգ չի դարձնէր, այլ ցոյց կու տայ մարդ արարածին *անաւարտութիւնը* միայն: Աստուածային կերպարը նկատելու չենք միականի ակնոցով, այլ՝ ամբողջական և լիակատար հանգամանքով:

Օրինակ.

Ծնողներ կը ծննդագործեն զաւակներ, որոնք նմանութիւնը ունին իրենց ծնողացը: Խարտեաշ կամ սեւ մագերով, կապոյտ կամ սրճագոյն աչքերով, երկայն կամ չափաւոր հասակով:

Ծնողք մը կը կրթէ, կը դաստիարակէ և կը վարժեցնէ իր զաւակը հաւատփի, բարոյականի և հոգեկան սպառազինութեան արժէքներով, սակայն չի կրնար *պարտաշրջել*, որ իր զաւակը դառնայ հաւատացեալ, առաքինի և աշխատասէր: Ծնողք մը *ի՛նք* չի՛ կրնար կարդալով բազմաթիւ գիրքեր, իր զաւակը մտաւորական դարձնել: Երկայն ալ, զաւակ մը **ի՛նք** պէտք է ուսանի, սիրէ և ընտրէ բարին և մերժէ չարը:

Մարդ արարածին շնորհուած աստուածակերպարին միւս երեսակը՝ մարդ էակին *պարտաւորութիւններն*, են: Այս կէտին մէջ մարդ *անաւարտ* ստեղծուած է: Եթէ մեր Արարիչ Տէրը մեզ ստեղծէր որպէս նախագծուած (programmed) էակներ, մենք պիտի կորսնցնէինք մեր *ազատ* կամքը:

Օրինակ.

Մարդ արարածէն զատ բոլոր ստեղծուածները (անասունները) նախագծուած են: Կովը կաթ արտադրող մեծենայ է: Մեղուն մասնագէտ է մեղր ջինելու: Թռչունները առանց դաստիարակուելու կը կառուցեն իրենց բոյները յար և նման նախապատմական դարերու: Մագի ճուտը, անմիջապէս որ կոտրէ հաւկիթը, կը ցատկէ ջուրը, իսկ հաւին ճուտը չի լողար, նոյնիսկ եթէ ստիպէս զայն:

Ճանչցուած տիեզերքի մէջ, մի միայն մարդ էակն է, որ փոխած է իր միջավայրը, ապրելակերպը և մտածելաձեւը: Զարայրէն դուրս ելած է ան և ջինած իր հիւղակը և ապա զայն վերածած է պալատանման բնակարանի: Հնարած է հեռաձայնի սպասարկութիւնը, համակարգիչի և հեռուստատեսիլի կազմածները: Վայրի անասունները, որոնք ապրած են մարդ էակներու ստեղծագործումէն շատ առաջ, տակաւին կը շարունակեն ապրիլ խոռոջներու կամ ծառերու ճիւղերուն վրայ:

Կենդանիները, նախապատմական ջրջաններէ ի վեր, կ'ապրին միայն ուտելու և սերնդագործելու համար, իսկ մարդ էակը՝ կեանքը մտածումի կը փոխէ և մտածումը ապրումի: Մարդկութեան պատմութիւնը՝ հոգեկան ապրումներու, գեղարուեստական ընմբունումներու և հոգեկան վայելքներու արձանագրութիւններ են սկսեալ վաղ անցեալէն, որ կը շարունակէ մինչեւ մեր օրերը: Սպանիոյ քարայրներու պեղումները յայտնաբերած են նախամարդու գծագրութիւնները, ինչպէս Կրէտի Մինիուան քարաքանդակութեան ցոյց տուած արուեստի քանդակները, Աթենքի գլխաւոր կարոյց Պարտենոնը, որուն քանդակագործական յարդարանքը ստեղծած են Ֆիտիոսի արուեստագէտներու իմբակը:

Մարդ՝ իր աստուածակերպար շնորհիով, ո՛չ միայն փոխակերպած է իր ջրջապատը, այլ նաեւ ի՛ր իմացական ու հոգեմտաւոր ներաշխարհը:

Ինչպէս առեւանգուած պատանի մը կը փնտռէ զինք ծննդագործող հայրն ու մայրը, նոյնպէս մարդ արարած, կրօնական խորհրդաբանութեամբ, աղօթքով ու գոհասեղաններով հետազօտած է իր Արարիչը: Հոգ չէ, որ սխալ տեղերու մէջ և անճիշտ միջոցներով որոնած ըլլայ ան, սակայն շարունակ ջանացած է գտնել այն Արարիչը, որուն ջերմապէս հաւատացած է:

Ա. Գրիգոր Նարեկացին երբ կը գրէ. *«Ես ակերտ ջիւտածքիս բոլոր տկարութիւնները... երկրածին մարմին... անդոյս և մարած ճրագարան»*, ան նկարագրած կ'ըլլայ մարդու ակամայ մղումները և մեղանջումները:

Պօղոս առաքեալ՝ իր աստուածաբանական գրութիւններուն մէջ, մարդկային *հողաշինուածքը* և մարմնի *մղումները* կը նոյնացնէ ըսելով.

ա. «Գիտեմ թէ ոչ մէկ բարի բան կը բնակի իմ մէջս, այսինքն իմ մարմնիս մէջ, բանի որ կամեցողութիւնը կայ իմ մէջս, իսկ բարին կատարելը՝ ոչ. որովհետեւ ոչ թէ կ'ընեմ բարին գոր կ'ուզեմ, այլ կ'ընեմ չարը գոր չեմ ուզեր»...Հռոմ. Է.18:

բ. «Ո՞վ պիտի փրկէ զիս այս մարմինէն, որ մահինն է»--Հռոմ. Է.24:

գ. «Առաջին մարդը՝ երկրէն, հողեղէն, իսկ երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկինքէն: Ինչպէս որ հողեղէնն է, այնպէս ալ այս հողեղէններն են, և ինչպէս որ երկնաւորն է, այնպէս ալ երկնաւորներն են: Եւ ինչպէս որ հողեղէնին պատկերը առինք, այնպէս ալ պիտի առնենք երկնաւորին պատկերը»--Ա. Կորնթ. ԺԵ.47-49:

Պօղոս առաքեալ, հողեղէնն ու մարմնեղէնը իրարու կցելով, կը ջանայ բացատրել անոնց անդիմադրելի *մղումները* և անզուսպ *զգացումները*. Առաքեալը չի ստորնացնէր հողաշէն մարմինը

ինչպէս ուրիշ առթիւ կ'ըսէ.

**«Զէ՛հ գիտեր թէ տաճար է՛ք Աստուծոյ, և Աստուծոյ
Հոգին կը բնակի ձեր մէջ»--Ա. Կորնթ. Գ. 16:**

Անշուշտ ակամայ հարցում մը կր՛ւ գայ մեր միտքը թէ այս անգուսպ և անդիմադրելի ցանկութիւնները և մարմնի մղումները ուրկէ՞ կու գան: Անոնք կու գան նախանիւթ մայր հողէն: Ճաճանջատեսիլ երկրագունտ աշխարհը, իր կենդանիներու և անտարներու բուսական կեանքի գոյատեւումը ապահովելու համար, անոնց փոխանցած է անձնակեդրոն և բնածին *«Եսակաւութիւն»* և *«Եսամղութիւն»*:

Կենդանիները կը մտածեն *միայն* իրե՛նք գիրենք ապրեցնել: Բուսական աշխարհին մէջ ալ պայքարը նոյնն է: Ժամանակ մը անհոգ եղէք խնամելու ձեր պարտէզը ու պիտի տեսնէք, որ անբաղձալի բոյսերը գրաւած են բոլոր դաշտը և կը ջանան տիրապետել բուրումնաւետ ծաղիկներու տարածքն ալ:

Մեր Տիրոջ Մարդեղութիւնը *(և Բանը մարմինն եղաւ)* -ը շօշափելի ապացոյցը դարձաւ, թէ մարդ ունի զօրութիւնը յաղթահարելու իր անգուսպ մղումները, որոնք ցարդ սանձարձակ կ'իջիւէին հողակերտ մարմնին վրայ:

Պօղոս առաքեալ վերադառնալով հողաջէն մարմնի վսեմութեան և անոր կարելիութեանը, կը գրէ Հռոմայեցւոց նամակին մէջ ըսելով.

«Կտղաջեմ ձեզի, եղբայրներ՛ք գթութեամբն Աստուծոյ, որ պատրաստէ՛ք ձեր մարմինները իբրեւ պատարագ կենդանի, սուրբ և աստուածհաճոյ, այ՛դ է ձեր բանաւոր պաշտամունքը»--ԺԲ.1:

Թէեւ կը գանգատինք և կը դժգոհինք ներկայ քաղաքակրթութեան և անոր ամօթալի անպատկառութեան համար, սակայն ՉՈրդ Դարը, մարդկութեան ապրելակերպի *ուկեղա՛րն* է եթէ ճշմարտապէս և իրաւմբ բաղդատենք զայն անցեալի անապահով վայրագ և արիւնարբու բռնատերերու վարչակարգերուն հետ:

Մարդ՝ իր հողակերտ շինուածքին բոլոր սկարութիւններովն ու երկրածին իղձերով հանդերձ, ան իր մէջ բան մը ունի՝ որ աւելի՛ է քան արիւնը, ոսկորը և ջիղը: Մարդը՝ անջրպետի գեղեցկագոյն ստեղծագործութիւնն է: Ան յաւերժական է, ո՛չ որովհետեւ կոթողներ կը թողու աշխարհին, այլ՝ որովհետեւ պարտութեան մէջ յաղթանակ կը կերտէ և մահկանացութեան մէջ աստուածութեան կը ձգտի:

Մարդ՝ իր աստուածապարզեւ արհեստագեղեցիկ մէջ ունի հզօր և արտայայտիչ զօրութիւն, որով ան կրնայ դառնալ գերմարդկային և աստուածանման, ճանչնալով և կատարելով իր պարտականութիւնը, կամ ապստամբելով իր Տէր Աստուծոյն դէմ, ուրանալ և դաւածանել իր Արարիչը ու միաբանիլ Չարին ու վայելել *ժամանակաորդ*։ Մարդ ունի կամենալու ուժ, բայց իրեն կը պակսի զայն *կատարելո՞ւ* կարողութիւնը։

«Այ թէ ինչ որ կ'ուզեմ՝ զայն կ'ընեմ, այլ ինչ որ կ'ատեմ՝ զայն կ'ընեմ» -- Հռոմ. Է.15:

Մարդը թէև հողաշէն ու կաւակերտ էակ է, սակայն է՛ նաեւ անզուգական հրաշակերտութիւն և անգերազանցելի մեծութիւն։ Յաւերժացնելու համար իր մեծութիւնն ու հրաշակերտութիւնը, ան կարիքը ունի ուխտագնացութեան դէպի Գերսեմանի և Գողգոթա։ Ինչպէս կաւեղէն ամանեղէններու արժէքը յայտնի կ'ըլլայ անոնց *թրծումէն*, յետոյ նոյնպէս ալ հողածին մարդ էակ՝ նուիրումի և տառապանքի հնոցին մէջ, առաւելաբար, կը մաքրագտուի և կ'ընձիւղէ իր հաւատքի հոգին։ Մեր Տէրը Յիսուս ըսաւ.

«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենամ, սակայն Բաջալերու եղէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհի» -- Յով. ԺԶ.33:

Յիսուս Քրիստոսի աշակերտները, որոնք դարձան առաքեալներ, վկայեցին թէ՛ խօսքով ու թէ՛ գործով ըսելով.

«Բազում նեղութիւններով է որ մենք պէտք է մտնենք Աստուծոյ Արհայութիւնը» -- Գործք. ԺԴ. 21:

Մարիամ Մագդաղենացին ապաշխարանքի արցունքներով և զղջումով դարձաւ Յարուցեալի աւետարանչուհին։ Ձակֆէոս մաքաւ հաւաք խոստովանելով իր վաշխառութիւնը և հատուցանելով զրկեալներուն, դարձաւ հաւատացեալ։ Նոյնպէս ալ հողաշէն և կաւակերտ մարդ էակ անաւարտ է։ Անոր մղումները աւելի զօրաւոր են քան զգացումները։ Ան՝ մարդ մտնելու վրայ եղող ճառագայթ մըն է։ Եթէ մարդ ուզէ յաւերժանալ, պարտ է իրեն մտնել և անցնիլ կրակի բովէն այնպէս ինչպէս կաւաշէն անօթ մը։

Հողաշէն ու կաւակերտ որեւէ իր կամ առարկայ առանց Բուրայէն անցնելու, կրկին կը դառնայ հող, որովհետեւ ան հող էր ու հողի կը վերածուի, իսկ եթէ *այրի* (թրծուի) կը գոյատեւէ։ Մարդուն կիրքերը ուժգին, փառքը անժուժկալ, բնութիւնը կաւեղէն

է, ան կը տառապի այս աշխարհի վրայ որովհետեւ *մարդկութիւնը* պակասած է մարդոցմէ: Մարդիկ, ընդհանրապէս կը նախընտրեն լսել կանչը մարմնական կիրքի, նախանձի և զգայական մղումներու:

նիւթի և հոգիի, մահուան և յաւերժութեան՝ արարչագործութեան փառապսակը եղող մարդ, պէտք ունի ապաշխարութեան և հոգեւոր հաշուետուութեան իր խղճին և Աստուծոյ առջեւ: Ապաշխարութիւն և ներքին վերածնունդ հոմանիշ գաղափարներ են, այսինքն հոգիին դարձակետը դէպի ազատութիւն և դէպի ճշմարիտ Աստուած: Հրածարելով սուտ աստուածներէ և պատրանքներէ, Բրիստոնեայի մը կեանքը մշտատեւ ապաշխարութիւն մը ըլլալու է: Որովհետեւ մարդ հողաշէն ծով մըն է անհամար պէտքերու, փափաքներու և բազմազան հակասութիւններու, անոր հայեացքը նայելու է՝ Պատարագեալ Մարդեղութեան.

«Դու ն որ նիւթերուն մէջ ամենէն նիւթականն ես, ով Պատարագեալ Մարդեղութիւն: Դու ն մեր երգն ես, մեր կանչը, մեր գաղափարը, իդէալը, իմաստը, գաղափարաբանութիւնը մեր ուժը: «Դու ն մեր ամենէն հոգեկանն ես:

«Դու ն՝ ամենէն ջօջափելին, նաեւ՝ անտեսանելի կապը հայրերուս, նախնիներուս, ցրուած արենակիցներուս հետ:

Դու ն՝ այսօրուան աղօթքս:

Պարզէ՛ անբացատրելի խորհուրդը այդ հրաշքիդ: Թու բեկան- եալ Մարմինին: Ով անթափանց, փակ խորան, խորհրդաւոր աշխարհ: Հրաշքները բացատրութիւն չու նին: Եթէ ու նենային՝ արդէն հրաշք չէին ըլլար»:

Հոկտեմբեր 18, 1992

Թորոնթօ